ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

9 հոկտեմբերի 2013թվականի **թիվ 68** քաղ. Կազան

«Մսի եւ մսամթերքի անվտանգության մասին»
Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի 3-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Ընդունել կից ներկայացվող «Մսի եւ մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 034/2013):

2. Սահմանել, որ «Մսի եւ մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն (ՄՄ ՏԿ 034/2013) ուժի մեջ է մտնում 2014 թվականի մայիսի 1-ից՝ բացառությամբ՝

ա) V բաժնի, որը վերաբերում է անասնաբուժական (կենդանաբուծական) պատրաստուկների, կենդանիների աճի խթանիչների (այդ թվում՝ հորմոնալ պատրաստուկների), դեղամիջոցների (այդ թվում՝ հակաբիոտիկների) պարունակության վերահսկողությանը, որն իրականացվում է սպանդային մթերքի

(բացառությամբ լեւոմիցիտինի (քլորամֆենիկոլի), տետրացիկլինի խմբի եւ բացիտրացինի) արտադրողի (մատակարարի) կողմից դրանց կիրառության վերաբերյալ տրամադրված տեղեկատվության հիման վրա եւ որն ուժի մեջ է մտնում միջպետական (տարածաշրջանային)՝ համապատասխան հետազոտությունների (փորձարկումների) ու չափումների մեթոդներ եւ կանոններ, ինչպես նաեւ նշված պահանջի կատարման ու կիրառման համար անհրաժեշտ նմուշառման կանոններ պարունակող ստանդարտների մշակումից եւ «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում ու Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ստանդարտների ցանկում դրանք ներառելուց հետո.

բ) VIII բաժնի, որը վերաբերում է մսամթերքի արտադրության ընթացքում նատրիումի նիտրիտի 0,9 տոկոսից ոչ ավելի զանգվածային բաժնով նիտրիտային աղադրման խառնուրդների ձեւով նատրիումի նիտրիտի (կալիում) օգտագործմանը, եւ որն ուժի մեջ է մտնում 2015 թվականի փետրվարի 15-ից.

գ) XI բաժնի,

որը վերաբերում է մսամթերքի մականշվածքում մսամթերքի խմբի մասին տեղեկությունների պարտադիր նշմանը եւ որն ուժի մեջ է մտնում մսամթերքը (մսային, միս պարունակող, մսաբուսական, բուսամսային) խմբերի ներքո դասակարգելու համար անհրաժեշտ կանոններ եւ մեթոդներ պարունակող համապատասխան միջպետական (տարածաշրջանային) ստանդարտների մշակումից եւ դրանք Համաձայնագրի 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ստանդարտների ցանկում ներառելուց հետո.

որը վերաբերում է մսամթերքին տրված անվանման կիրառմանը եւ որն ուժի մեջ է մտնում համապատասխան միջպետական (տարածաշրջանային)

ստանդարտների մշակումից եւ դրանք Համաձայնագրի 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ստանդարտների ցանկում ներառելուց հետո:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Ս. Ռումաս	**Բ. Սագինտաեւ**	**Ի. Շուվալով**